# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հայաստան. Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր

*(49078-005)*

**Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցում / տեխնիկական վերազինում**

**Փետրվար, 2024**

Պատրաստվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից

INTERNAL. This information is accessible to ADB Management and staff. It may be shared outside ADB with appropriate permission.

## Բովանդակություն


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ..... 3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4
   1.1. Ծրագրի ընդհանուր նկարագիր..... 4
   1.2. Անվտանգության մեխանիզմների քաղաքականության համապատասխանության գնահատման հաշվետվության նպատակը և շրջանակը..... 5
   1.3. Անվտանգության երաշխիքների պահանջները..... 6
   1.4. ~~Նախագծի~~ Ծրագրի իրականացման շրջանակը..... 7
2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՇՐՋԱՆԱԿԸ..... 8
   2.1. Հողատարածքի տեղադիրքը..... 8
   2.2. Հետազոտության մեթոդաբանությունը..... 10
   2.3. Մշտական և ժամանակավոր ազդեցությունները..... 10
   2.4. Հողատարածքը..... 11
   2.5. Շենք-շինությունների վրա ազդեցությունը..... 11
   2.6. Ձեռնարկատիրական գործունեության և զբաղվածության վրա ազդեցությունը..... 12
   2.7. Բուսականության վրա ազդեցությունը..... 12
3. ՆԱԽՔԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 12
   3.1. Սոցիալական հարցերով և շրջակա միջավայրի պահպանության գծով փորձագետների համակենտրոնացում..... 12
   3.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական փորձաքննություն..... 13
4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՆՈՒՄ..... 13
   4.1. Խորհրդակցություններ և մասնակցություն..... 13
   4.2. Բողոքների քննման մեխանիզմներ..... 14
   4.3. Հանրային քննարկումների և հաղորդակցման պլան..... 16
5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 18
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 19
Հավելված 1. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիրը..... 20
Հավելված 2. Տեղանքի լուսանկարները..... 21
Հավելված 3. Տեղանքի կադաստրային քարտեզը..... 25
Հավելված 4. «Google Maps» հավելվածի միջոցով արված լուսանկարներ..... 26
Հավելված 5. Հանրային հաղորդակցության և քննարկումների հաշվետվություն..... 27

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԵԱ | Ազդեցության ենթարկվող անձ |
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ԱՄՔ ՀԳՀ | Անվտանգության մեխանիզմների քաղաքականության համապատասխանության գնահատման հաշվետվություն |
| ԱՄՔՓ | Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթուղթ |
| ԱՌՆ | Աղետների ռիսկի նվազեցում |
| ԲԿՇ | Բնապահպանական կառավարման շրջանակ |
| ԲԿՊ | Բնապահպանական կառավարման պլան |
| ԲՔՄ | Բողոքների քննման մեխանիզմ |
| ԳՁ | Գործառնական ձեռնարկ |
| ԴԱՎԾ | Դպրոցների սեյսմիկ ամրացման և վերանորոգման ծրագիր |
| ԻՄ | Իրականացնող մարմին |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՏԶՀ | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ՆՍԳ | Նախնական սոցիալական գնահատում |
| ՇՄԱԳ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում |
| ՇՄԱՆՓ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական փորձաքննություն |
| ՍԱԲԾ | Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր |
| ՏԿԵՆ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ՏՔՇ | Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ |

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. Ծրագրի ընդհանուր նկարագիր

1. «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» կողմից ֆինանսավորվող «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի» (այսուհետ՝ ~~Նախագիծ~~Ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ աղետներին պատրաստվածության մակարդակի բարձրացումը և արձագանքման կարողությունների ամրապնդումն է[1]: Հաշվի առնելով ՀՀ-ի սեյսմիկ խոցելիության բարձր մակարդակը՝ երկրում անհրաժեշտ է զարգացնել սեյսմիկ նորմերի պահպանմամբ շինարարության կարողությունները, ինչպես նաև բարձրացնել սեյսմիկ աղետների հանրային իրազեկումը: ~~Նախագծի~~ Ծրագրի երկու կարճաժամկետ արդյունքներն են՝ (i) սեյսմակայուն ենթակառուցվածքների զարգացմանը և սեյսմիկ ռիսկերի կառավարմանն ուղղված կարողությունների ամրապնդումը և (ii) սեյմիկ անվտանգության վերաբերյալ իրազեկության բարձրացումը, այդ թվում՝ տեղեկատվական գործիքների կիրառմամբ: «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ~~նախագիծը~~ծրագիրը» ամբողջացնելու է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից 2015թ. սեպտեմբերի 22-ին հաստատված «Սեյսմիկ անվտանգության բարելավման արդյունքահեն փոխատվության ծրագիրը (ՍԱԲԾ)», որի շրջանակներում ԱԶԲ-ից ներգրավվել են վարկային միջոցներ՝ 88,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով[2]: Սահմանված ժամկետների ավարտին ՍԱԲԾ-ի անմիջական շահառու են հանդիսանալու 18,000 դպրոցականներ և 3,100 ուսուցիչներ, ինչպես նաև դպրոցների՝ այլ գործառույթներ իրականացնող անձնակազմը: ՍԱԲԾ-ի ակնկալվող կարճաժամկետ արդյունքներն են՝ (i) 46 դպրոցական մասնաշենքերի սեյսմակայունության բարձրացումը, (ii) սեյսմիկ աղետներին պատրաստվածության մակարդակի բարձրացումը և արձագանքման կարողությունների ամրապնդումը, (iii) սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և նվազեցմանն ուղղված օժանդակման մեխանիզմների և համակարգերի կատարելագործումը և (iv) սեյսմիկ անվտանգության ծրագրերի մշակման ու իրագործման ազգային կարողությունների ամրապնդումը: «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ~~նախագիծը~~ ծրագիրը» հիմնված կլինի ՍԱԲԾ-ի իրագործման հարուստ փորձի վրա և կբարելավի դրա արդյունքները՝ տեխնիկապես վերազինելով և (կամ) վերակառուցելով ևս մեկ ուսումնական հաստատություն՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցը, և ժամանակակից տեխնոլոգիաների ու ցանցային հաղորդակցման ծառայությունների կիրառմամբ ամրապնդելով երկրի՝ աղետներին պատրաստվածության կարողությունները:

## 1.2. Անվտանգության մեխանիզմների քաղաքականության համապատասխանության գնահատման հաշվետվության նպատակը և շրջանակը

[1] Ծրագրի դրամաշնորհային ֆինանսավորումը ստացվում է «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամից (JFPR)» և ենթակա է Ճապոնիայի կառավարության կողմից հաստատման:

[2] 2023թ. ԱԶԲ-ը արդեն գործող ՍԱԲԾ վարկային համաձայնագրի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորում է ներգրավել, քանի որ ծրագրի նախանշված նպատակները կյանքի չեն կոչվել ծախսերի գերազանցման պատճառով:

2. Անվտանգության մեխանիզմների քաղաքականության համապատասխանության գնահատման սույն հաշվետվությունը (ՀԳՀ) պատրաստվել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ Համայնքի Ոսկեհատ գյուղի միջնակարգ դպրոցի վերակառուցման և (կամ) տեխնիկական վերազինման նկատառումներով ու ներկայացնում է հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) մշտական և ժամանակավոր ազդեցության գնահատման նպատակով ԱԶԲ-ի 2009թ. անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (ԱՄՔՓ) հիման վրա համապարփակ փորձաքննության արդյունքները[3]: Հաշվետվության մեջ նախանշվում են ծրագրի ~~նախագծի~~ շրջանակներում ձեռնարկվելիք՝ հնարավոր ազդեցությունների մեղմացման միջոցառումները՝ երաշխավորելու, որ ազդակիր բնակչությունը պատշաճ կերպով իրազեկված է շինարարական աշխատանքների մասին, և որ շինարարության հետ կապված հնարավոր ազդեցությունները, եթե այդպիսիք կլինեն, մեղմացվելու են:

3. Ինչպես արդեն նշվել է՝ «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» դրամաշնորհային ֆինանսավորմամբ իրականացվելիք «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիրը ~~(նախագիծը)~~» ամբողջացնելու է ՍԱԲԾ-ը: Այն ներառում է Երևանին հարակից պետական մեկ դպրոցի նախագծում և շինարարություն: Դպրոցն ապահովված է լինելու ներառական կրթության հնարավորություններով, համապատասխանելու է 21-րդ դարի պահանջներին, գործելու է համայնքային կյանքի փոխակերպման տրամաբանությամբ, ինչպես նաև համապատասխանելու է սեյսմիկ անվտանգության բարձր չափանիշներին: ~~Նախագիծը~~ Ծրագիրը խթան է հանդիսանալու Կառավարության գործընկերների համար՝ կառավարման բոլոր մակարդակներում՝ հասնելու աղետների ռիսկերի կառավարման ոլորտում նորարար և տնտեսապես արդյունավետ լուծումների ինստիտուցիոնալացմանը: ~~Նախագիծն~~ Ծրագիրն ապահովելու է՝ (i) դպրոցի սեյսմակայուն վերակառուցման և վերազինման ոչ ստանդարտային տնտեսապես արդյունավետ նախագծային լուծումներ, որոնք կիրառվելու և տեղայնացվելու են ՍԱԲԾ-ում ընդգրկված այլ դպրոցներում, (ii) «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի ~~(նախագծի)~~» շրջանակներում ավարտին հասցված դպրոցի շենքի շահագործման ուղեցույց, որը ներդրվելու և կիրառվելու է այլ դպրոցներում, և (iii) Հայաստանում ԱՌՆ նպատակային և արդյունավետ միջոցառումներ անցկացնելու մոտեցումներ: Անհրաժեշտության դեպքում սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերը լրացուցիչ կատարելագործվելու են, ինչը, ընդհանուր առմամբ, անդրադառնալու է Հայաստանում շինարարության ոլորտի վրա: «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» դրամաշնորհային ֆինանսավորմամբ իրականացվելիք «Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի ~~(նախագծի)~~» ևս մեկ առանձնահատկություն, այն է՝ հանգամանորեն պլանավորված գնահատման առաքելության այցը Ճապոնիա՝ ճապոնացի գործընկերների հետ նախապես համաձայնեցված հանդիպումների և խորհրդակցությունների օրակարգով, բարձրացնելու է ծրագրի ~~նախագծի~~՝ կարողությունների զարգացման բաղադրիչի արդյունավետությունը:

[3] Շինարարական միջամտության տեսակը որոշվելու է մանրամասն նախագծման փուլում, դպրոցի մասնաշենքի սեյսմիկ վիճակի համապարփակ գնահատումից հետո:

Որպես հետևանք՝ իրազեկության բարձրացմանն ուղղված նորարարական և նպատակային արշավների միջոցով սեյսմիկ աղետների ռիսկերի նվազեցման ճապոնական փորձը ուսումնասիրվելու և տեղայնացվելու է Հայաստանում: Սեյսմիկ ակտիվության վերաբերյալ բնակչության իրազեկման և աղետներին պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով տեխնոլոգիաների, ցանցային հաղորդակցման միջոցների կիրառումը, հանրային հեղինակություն վայելող անձանց՝ որպես բարի կամքի դեսպանների ներգրավումը՝ ուղղված սոցիալական մեդիա հարթակներում նման անսովոր թեմայի լայն տարածումն ապահովելուն, անշուշտ, նորարար լուծում է: ՍԱԲԾ-ից քաղած դասերը հաշվի են առնվելու Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ընթացքում և էլ ավելի են ամրապնդելու իրականացնող մարմնի (ԻՄ)՝ սեյսմակայուն նախագծման և շինարարության կարողությունները:

4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) Ծրագրի ~~Նախագծի~~ գործադիր մարմինն է (ԳՄ): Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացնող մարմինն է (ԻՄ) և պատասխանատու է դրա ամենօրյա համակարգման, իրագործման, մշտադիտարկման և շրջակա միջավայրի պահպանության երաշխիքների կառավարման, շրջական միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցության անմիջական վերահսկողության և մշտադիտարկման համար:

### 1.3. Անվտանգության երաշխիքների պահանջները

5. Բնապահպանական և սոցիալական ապահովության նկատառումները նախագծման վաղ փուլում հաշվի առնելու և ավելի լայն առումով՝ Ծրագրի ~~Նախագծի~~ կայուն ուղղվածությունը հաստատելու նպատակով կատարվել է շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև սոցիալական ազդեցության փորձաքննություն: ԱԶԲ-ի 2009թ. անվտանգության մեխանիզմների քաղաքականության համաձայն՝ ~~Նախագիծը~~ Ծրագիրը ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի դասվում է B կատեգորիայի, իսկ հարկադիր տարաբնակեցման տեսանկյունից՝ C կատեգորիայի շարքին:

6. ԱԶԲ-ի 2009թ. անվտանգության մեխանիզմների քաղաքականության հարկադիր տարաբնակեցման շրջանակում ԱԶԲ-ի մոտեցումները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա՝

(i) Հարկադիր տարաբնակեցումից անհրաժեշտ է հնարավորինս խուսափել կամ այն առնվազն հասցնել նվազագույնի:

(ii) Անհրաժեշտ է նախատեսել ծախսերի փոխհատուցման և (կամ) ռեաբիլիտացիայի տրամադրում՝ երաշխավորելով ազդեցության ենթարկված անձի (ԱԵԱ)՝ նախքան ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակի պահպանումը:

(iii) ԱԵԱ-ին անհրաժեշտ է լիարժեք տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրել ՀՕՏ-ի փոխհատուցման և (կամ) ռեաբիլիտացիայի տարբերակների մասին:

(iv) ԱԵԱ-ի սոցիալ-մշակութային կառույցներին անհրաժեշտ է հնարավորինս աջակցություն ցուցաբերել:

(v) Փոխհատուցումն անհրաժեշտ է իրականացնել կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքով:

(vi) Իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման և (կամ) ռեաբիլիտացիայի համար:

(vii) Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կին տնտեսվարողներին և խոցելի այլ խմբերին, ինչպես օրինակ՝ բնիկ ժողովուրդների իրավունքներին՝ նրանց ցուցաբերելով համապատասխան աջակցություն իրենց կարգավիճակը բարելավելու համար:

(viii) ՀՕՏ-ը անհրաժեշտ է ընկալել և իրագործել որպես Ծրագրի ~~նախագծի~~ բաղկացուցիչ մաս, իսկ փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ ներառել Ծրագրի ~~նախագծի~~ եկամուտ և ծախսեր հաշվարկներում:

(ix) Փոխհատուցումը ու տարաբնակեցման հատկացումները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի օտարման գոտու հողի հարթեցման և քանդման իրավունքի ստանալը:

**1.4. Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման շրջանակ**

7. Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ընթացքում նույնությամբ պահպանվելու են ՍԱԲԾ-ի համակարգերն ու իրականացման մեխանիզմները: Ինչպես արդեն նշվել է՝ ՀՏՋՀ-ը ԻՄ-ն է՝ պատասխանատու Ծրագրի ~~Նախագծի~~ գործունեության ամենօրյա կառավարման համար: ՀՏՋՀ-ը լիովին համալրված է անհրաժեշտ մասնագետներով՝ մշտական հիմունքներով աշխատող գործադիր տնօրենի գլխավորությամբ: ՏԿԵՆ-ը ԳՄ-ն է՝ պատասխանատու Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման վերահսկողության համար: ՍԱԲԾ-ի համակարգող մարմինը համակարգելու է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացումը, աջակցելու է դրա հետ կապված որոշումների կայացմանը և Կառավարության հետ Ծրագրի ~~Նախագծի~~ համաձայնեցման ընթացքին: ՀՏՋՀ-ի Կառավարիչների խորհուրդն իր հերթին հաստատելու է ազգային քաղաքականության սկզբունքները և ապահովելու է ռազմավարական առաջնորդություն ու աջակցություն:

8. Մանրամասն ինժեներական նախագծման և շինարարական աշխատանքների կազմակերպման ամենօրյա վերահսկողության նպատակով ՀՏՋՀ-ը նախատեսում է մասնագիտացված ինժեներական նախագծման և շինարարության կազմակերպման և տեխնիկական վերահսկողության խորհրդատվական ընկերություններ ներգրավել: Վերոհիշյալ ընկերությունները համալրված են լինելու շրջակա միջավայրի պահպանության, սոցապահովության, առողջապահության, անվտանգության հարցերով փորձագետներով՝ Նախագծի պահանջների համաձայն համապատասխան ուղղություններով փորձագիտական վերլուծություն իրականացնելու նպատակով: Հսկիչ ինժեները կամ տեխնիկական վեահսկողության պատասխանատուն հետևելու և վերահսկելու է Ծրագրի ~~Նախագծի~~ ընթացքը, ներառյալ՝ շինարարական աշխատանքների և թերավարտ մասերի երաշխավորված վերացման ընթացքում ԲԿՊ-ի իրագործումը, կարգավորելու է պայմանագրի հետ կապված փոփոխությունները, ներկայացված բողոքները, աշխատանքների շրջանակների վերանայումը:

9. Կապալառուի պատասխանատվության շրջանակի մեջ են մտնում՝

(i) ԲԿՊ-ի իրականացումը,

(ii) Մրցույթային փաստաթղթում սահմանված կարգով մեկական շրջակա միջավայրի պահպանության ու սոցիալական հարցերով մասնագետի և առողջապահության ու անվտանգության ոլորտի մասնագետի՝ որպես հաստիքային աշխատողների վարձակալությունը, կամ որպես այլընտրանքային տարբերակ՝ առողջապահության ու անվտանգության ոլորտում աշխատելու փորձ ունեցող շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հարցերով մասնագետի ներգրավումը,

(iii) Մասնագիտացված հերպետոլոգի՝ ոչ լրիվ դրույքաչափով ներգրավումը՝ անձնակազմին պատրաստելու, օձերին և այլ սողուններին հավաքելու և մեկուսացնելու համար, եթե այդպիսիք լինեն,

(iv) Արտակարգ, վթարային իրավիճակների կամ այլ պատահարների դեպքում տեխնիկական վերահսկողության պատասխանատուին և իրավասու այլ մարմիններին անհապաղ ծանուցումը,

(v) Իրավասու մարմիններից թույլտվությունների ձեռքբերումը, դրանց պատճենների տրամադրումը տեխնիկական վերահսկողության պատասխանատուին,

(vi) Շինարարական աշխատանքների մշտադիտարկումը և խախտումների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը,

(vii) ՇՄԱՆՓ- կամ ԲԿՊ-ով սահմանված կարգով շրջակա միջավայրի պահպանության ծրագրի իրականացման հաշվետվությունը:

10. ԱԶԲ-ը մշտադիտարկելու է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ընթացքը, ինչպես նաև կարող է կանոնավոր ստուգայցեր և հսկողություն իրականացնել՝ ԱԶԲ-ի 2009թ. անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթում արտացոլված սկզբունքների և պահանջների համաձայն: ԱԶԲ-ը աջակցելու է ՀՏԶՀ-ին սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության և ռիսկերի կառավարման հարցում: ԱԶԲ-ը նաև Ծրագրի ~~Նախագծի~~ վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրելու՝ պաշտոնական կայքում ներբեռնելով ՇՄԱՆՓ-ի, ՀԳՀ-ի, ԲԿՊ-ի անգլերեն տարբերակները, ինչպես նաև բնապահպանական մշտադիտարկման ամենամյա հաշվետվությունները: Ստորև՝ ԱԶԲ-ի պատասխանատվության շրջանակը Ծրագրի ~~Նախագծի~~ իրագործման տարբեր փուլերում՝

## 2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՇՐՋԱՆԱԿԸ

### 2.1. Հողատարածքի տեղադիրքը

11. Շինարարական աշխատանքներ են նախատեսվում միայն սեյսմակայուն ենթակառուցվածքների զարգացմանը և սեյսմիկ ռիսկերի կառավարմանն ուղղված կարողությունների ամրապնդման միջնաժամկետ արդյունքի շրջանակում, ինչը նախատեսում է Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցում և (կամ) տեխնիկական վերազինում:

Դպրոցը գտնվում է Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում: Նախնական ինժեներական գնահատման արդյունքների համաձայն՝ դպրոցի շենքը ամրացվելու է՝ առանց հիմնական կառուցվածքը քանդելու: Դպրոցի շենքը բաղկացած է երեք բաժանմունքներից: Տարածքը բավական մեծ է՝ 31,169 ք.մ., հիմնական մասնաշենքը

զբաղեցնում է ընդհանուր տարածքի 51%-ը միայն, իսկ մնացյալ 15%-ը զբաղեցնում են պահեստը, զուգարանը, կաթսայատունը, հրաձգարանը և լողավազանը: Այս շինությունները դպրոցի սեփականությունն են հանդիսանում: Նկար 1-ում կարելի է տեսնել դպրոցի տարածքի արբանյակային լուսանկարը:

12. Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքներն ընթանալու են հետևյալ ուղղություններով՝

- Շենքի ամրաշինական աշխատանքներ, կրող պատերի ամրացում երկաթբետոնե կառուցվածքների միջոցով,
- Հատակի ծածկերի թարմացում,
- Նոր դռների և պատուհանների տեղադրում,
- Նոր շարվածքներ ու հատակապատում,
- Միջնապատերի տեղադրում, ներքին կոյուղային և ջրմուղ գծերի, ջեռուցման ու էլեկտրականության անցկացում,
- Ներքին հարդարման աշխատանքներ,
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար ենթակառուցվածքների, մասնավորապես՝ թեքամուտքերի և վերելակի կառուցում,
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ:

**Նկար 1՝ Դպրոցի տարածքի արբանյակային լուսանկարը**

### 2.2. Հետազոտության մեթոդաբանությունը

13. ՀՏՁՀ-ը բազային հետազոտություն է իրականացրել՝ կադաստրային քարտեզի և սեփականության իրավունքի վկայագրի ուսումնասիրություն կատարելով, դաշտային այցեր ու անձնական հանդիպումներ ունենալով շահագրգիռ անձանց, այդ թվում՝ դպրոցի ղեկավարության, անձնակազմի, դպրոցականների, ինչպես նաև տեղի բնակչության հետ: ՀՏՁՀ-ը ՀՀ Կադաստրի կոմիտեից պաշտոնապես ստացել է Ոսկեհատի միջնակարգ դպրոցի ամենավերջին թարմացված կադաստրային քարտեզը, որը ՀՕՏ հնարավոր ազդեցությունները

վերհանելու նպատակով ուսումնասիրվել է հիմնադրամի ինժեներների և սոցիալական հարցերով մասնագետի կողմից: Նախաձեռնվել են դաշտային այցեր և հետազոտություններ՝ տեղում հաստատելու հողատարածքի փաստացի վիճակի համապատասխանությունը կադաստրային քարտեզում և սեփականության իրավունքի վկայագրում նշված տվյալներին: Հողատարածքը հանրային սեփականություն է, դպրոցի տարածքը երրորդ անձանց կողմից չի շահագործվում: Նախագծի շրջանակներում մասնավոր սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում: ԾրագիրՆախագիծը չի ենթադրում ֆիզիկական և տնտեսական հարկադիր տարաբնակեցում. շահառուների կենսամակարդակի ապահովման ու եկամտի ձևավորման աղբյուրները ազդեցության չեն ենթարկվում:

14. Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության հետ ճանաչողական հանդիպում է անցկացվել: 2023թ. մայիսի 12-ին տեղի է ունեցել ինժեներական նախագծման ու շրջակա միջավայրի պահպանության երաշխիքների ապահովման թիմերի և Ոսկեհատի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի ու Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար տկն Սոֆիկ Պետրոսյանի համատեղ հանդիպումը, որի ընթացքում Նախագծի թիմը ներկայացրել է Նախագիծըծրագիրը, տեղեկացրել ԱՄՔ ՀԳՀ անցկացնելու, ՇՄԱՆՓ-ի և մեղմացման միջոցառումների անհրաժեշտության մասին և արդյունավետ ու բովանդակալից հանրային քննարկումներ անցկացնելու հարցում աջակցության ակնկալիք հայտնել: Առաջիկա հանրային քննարկումների վերաբերյալ գովազդային նյութ է հրապարակվել և տարածվել ազդակիր բնակչության ու հանրության շահագրգիռ շրջանակներում:

15. Նախագծի մասին տեղեկությունը հանրայնացվել է 2023թ. մայիսի 18-ին Ոսկեհատ բնակավայրում հանրության հետ խորհրդակցության ժամանակ: Հանրային հաղորդակցության և քննարկումների, ինչպես նաև տեղեկության հրապարակայնացման մանրամասները ներկայացված են Հավելված 5-ում:

### 2.3. Մշտական և ժամանակավոր ազդեցություններ

16. ՀՏՋՀ-ի անձնակազմի, այդ թվում՝ սոցիալական ու շրջակա միջավայրի պահպանության հարցերով մասնագետների համատեղ ջանքերով 2023թ. ապրիլին կատարվել է սոցիալական համապատասխանության փորձաքննություն, որի շրջանակում դաշտային այցերի և հետազոտությունների միջոցով համալիր վերլուծության են ենթարկվել և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ ազդեցությունները: Ամփոփվել է, որ ենթանախագծի շրջանակում նախատեսված կապիտալ նորոգման և սեյսմիկ ամրացման աշխատանքները ԱԵԱ-ի, այդ թվում՝ մասնավոր սեփականատերերի և սեփականության իրավունք չունեցող անձանց վրա ազդեցություն չեն ունենում: Դպրոցի տարածքը ցանկապատված է: Գերեզմանատունը գտնվում է հողատարածքի ձախ կոմից 10 մետր հեռավորության վրա: Դպրոցի տարածքի հետնամասում 5 մետր լայնությամբ համայնքային նշանակության ճանապարհ է ձգվում, որը դպրոցի տարածքը տարանջատում է մասնավոր տներից և ջերմոցներից: Տարածքի աջ կողմում դպրոցի սահմաններից 8 և ավելի մետր հեռավորության վրա են գտնվում մասնավոր բնակելի տներ և գյուղատնտեսական նշանակության հողեր:

## 2.4. Հողատարածքը

17. Հողատարածքի՝ Ծրագրի ~~Նախագծի~~ շրջանակներում ազդեցության ենթակա հատվածի ընդհանուր մակերեսը 3.1169 հա է: Այն պետական սեփականություն է հանդիսանում և դպրոցին է տրամադրվել անհատույց օգտագործման իրավունքով: Հողատարածքի և շինությունների մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հողատարածքի և տարածքում տեղակայված շինությունների նկարագիրը

| | Հողատարածք | Շենք-շինություններ | |
|---|---|---|---|
| Կադաստրային ծածկագիր | 04-081-0030-0039 | Դպրոց | 04-081-0030-0039-001 |
| | | Պահեստ | 04-081-0030-0039-002 |
| | | Կաթսայատուն | 04-081-0030-0039-003 |
| | | Զուգարան | 04-081-0030-0039-004 |
| | | Հրաձգարան | 04-081-0030-0039-005 |
| | | Լողավազան | 04-081-0030-0039-006 |
| Տարածքի մակերեսը | 31169 ք.մ. | Դպրոց | 2352.4 ք.մ. |
| | | Պահեստ | 56.1 ք.մ. |
| | | Կաթսայատուն | 70 ք.մ. |
| | | Զուգարան | 12.7 ք.մ. |
| | | Հրաձգարան | 53.6 ք.մ. |
| | | Լողավազան | 286.5 ք.մ. |
| Շահագործման նպատակ | Բնակելի | - | |
| Տեսակ | Հանրային շինություն | - | |
| Սեփականության իրավունք | Անհատույց | - | |

## 2.5. Շենք-շինությունների վրա ազդեցությունը

18. Նախագծի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել դպրոցի շենքը և կաթսայատունը, ընդհանուր առմամբ՝ 2422 ք.մ.: Պահեստն ու դպրոցի շենքից դուրս գտնվող զուգարանի շինությունները (68.6 ք.մ.) կազմաքանդվելու են: Մնացյալ շինությունները քարե շարվածքից կառույցներ են, մասնավորապես, քարե շարվածքից հրաձգարանի և լողավազանի վերականգնումը դիտարկվելու է նախագծման փուլում: Մասնավոր սեփականություն հանդիսացող որևէ կառույց թե մշտական, թե ժամանակավոր ազդեցության չի ենթարկվում:

## 2.6. Ձեռնարկատիրական գործունեության և զբաղվածության վրա ազդեցությունը

19. Ձեռնարկատիրական գործունեության, բնակչության զբաղվածության կամ տնտեսական ռեսուրսների հասանալիության վրա մշտական կամ ժամանակավոր սահմանափակումներ չեն ակնկալվում: Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի, գյուղատնտեսական նշանակության շինությունները, հանրային օգտագործման համար նախատեսված կառույցները, այդ թվում՝ գերեզմանատունը, շինարարական միջամտության ենթակա հողատարածքի սահմաններից 7-50 մետր հեռավորության վրա են գտնվում: Մերձակայքում ձեռնարկատիրական նշանակության օբյեկտներ չկան:

## 2.7. Բուսականության վրա ազդեցությունը

20. Նախագծի շրջանակներում ազդեցության ենթակա բոլոր ծառատեսակները, ներառյալ՝ պտղատու, դեկորատիվ, փայտանյութ տվող ծառերը համայնքային սեփականություն են հանդիսանում, դրանք վերատնկվելու են դպրոցի տարածքում՝ 1:6 հարաբերակցությամբ, ՍԱԲԾ-ի Բնապահպանական գնահատման և ուսումնասիրությունների շրջանակներում (ԲԳՈՒՇ)[4] նախանշված ծառերի փոխարեն:

## 3. ՆԱԽՔԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 3.1. Սոցիալական հարցերով և շրջակա միջավայրի պահպանության գծով փորձագետների ներգրավում և համակենտրոնացում

21. ՀՏՋՀ-ը պատասխանատու է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման, կառավարման, մշտադիտարկման և համակարգման, ներառյալ՝ մասնավորապես, սոցիալական երաշխիքների ապահովման անմիջական քաղաքականության, բնապահպանական ազդեցության վերահսկողության/գնահատման, շինարարական աշխատանքների մշտադիտարկման համար: ՀՏՋՀ-ի Հաստատություններին օժանդակության բաժինը ներգրավել է բնապահպանության ոլորտի երկու և գենդերային քաղաքականության ու սոցիալական զարգացման հարցերով մեկ փորձագետի: Տվյալ դեպքում ՀՏՋՀ-ի պատասխանատվության շրջանակը ներառում է՝ (i) մանրամասն ուսումնասիրություններ, հետազոտություններ, դպրոցի ինժեներական նախագծում, (ii) շինարարական աշխատանքների ծավալի՝ շինարարական աշխատանքների պայմանագրերին համապատասխանության գնահատում, վճարումների հավաստագրում, (iii) հանրային իրազեկման արշավներ, (iv) բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) մշտադիտարկում, (v) բողոքների քննման մեխանիզմի (ԲՔՄ) մշակում և գործարկում, ինչպես նաև ամենամսյա ու ամենամյա հաշվետվությունների պատրաստում: Ինժեներական և շինարարության կազմակերպման խորհրդատուն ՀՏՋՀ-ին աջակցելու է նշված բոլոր գործառույթների իրականացման հարցում, իսկ կառավարման և վերահսկման խորհրդատուն ստանձնելու է շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հարցերի համապատասխանության գնահատման ամենօրյա վերահսկողությունը:

### 3.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական փորձաքննություն

22. 2003թ. հուլիսին ԱԶԲ-ի խորհրդատուի կողմից Ծրագրի ~~Նախագծի~~ համար իրականացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական փորձաքննություն (ՇՄԱՆՓ), որի նպատակը ԱԶԲ բնապահպանական երաշխիքների սկզբունքներին, ինչպես նաև ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող օրենքներին, կարգավորումներին համապատասխանության ապահովումն է: Փորձաքննությունը ներառում է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ողջ ցիկլի ընթացքում՝ նախագծման,

4 ԱԶԲ, 2015թ., Բնապահպանական գնահատման և ուսումնասիրությունների շրջանակի (ԲԳՈՒՇ), SSIP Environmental Assessment and Review Framework, ք. Երևան

նախաշինարարական, շինարարության ակտիվ փուլերից մինչև շահագործում ու տեխնիկական սպասարկում, հնարավոր ազդեցության մեղմացման և կանխարգելման միջոցառումներ և այդ միջոցառումներին շինարարական աշխատանքների համապատասխանության մշտադիտարկում: Մանրամասն ԲԿՊ-ը, որը մշակվել է նախագծային փաստաթղթերի հիման վրա, ընդգրկվելու է շինարարական աշխատանքների ծավալի ամփոփագրում և մրցույթային փաստաթղթերի ու շինարարական աշխատանքների պայմանագրի անբաժանելի մաս է համարվելու: Պայմանագրի կողմերը պատասխանատու են ԲԿՊ-ի իրականացման համար և պետք է համապատասխան կետեր ներառեն ենթակապալային պայմանագրերում:

## 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՆՈՒՄ

### 4.1. Խորհրդատվություն և մասնակցություն

23. 2023թ. մայիսի 12-ին Ոսկեհատ բնակավայրում ~~Նախագծի Ծրագրի~~ իրականացման օրակարգով հանդիպում է անցկացվել ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարության հետ, որի ժամանակ նաև հակիրճ ներկայացվել է նախապես համայնքապետարան ուղարկված Նախագիծը (Տե՛ս՝ Հավելված 5):

24. Հանդիպման ընթացքում շահագրգիռ կողմը տեղեկացվել է Նախագծի մանրամասների, սոցիալական երաշխիքների ապահովման համապատասխանության գնահատման ընթացիկ գործընթացի, հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումների մասին: Ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարը տեղեկացվել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ԱԶԲ անվտանգության մեխանիզմների քաղաքականության պահանջների համաձայն Նախագծի նախաձեռնողների կողմից հանրային խորհրդակցությունների շարք է ծրագրվում: Շահագրգիռ կողմին կոչ է արվել աջակցել այդ հարցում և նպաստել հանրային լայն մասնակցության, ինչպես նաև քննարկումների բովանդակայնության ու արդյունավետության ապահովմանը: Նախագծի շուրջ հանրային խորհրդակցություններն անց են կացվում հանրային քննարկումների կազմակերպման ու անցկացման և հանրային ծանուցման՝ ԱԶԲ ԱՄՔ պահանջներին համապատասխան և ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1325 որոշմամբ սահմանված կարգով: Ըստ այդմ՝ ԱԶԲ ԱՄՔ պահանջներից ելնելով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր Ոսկեհատ բնակավայրում հանրային քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտություն է առաջացել:

25. Նախքան հանրային քննարկում կազմակերպելը ՀՏԶՀ-ը ապահովել է անհրաժեշտ և արդիական տեղեկությունների պատեհաժամ հանրայնացումը, տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ԱԵԱ-ի համար, երաշխավորել, որ հաշվի են առնվել կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի խմբերի կարիքները: Հանրային քննարկումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է Վաղարշապատ համայնքի

պաշտոնական կայքէջում և սոցիալական մեդիա հարթակներում համայնքի պաշտոնական էջերում, ինչպես նաև փակցվել է ազդակիր համայնքի հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրերում:

26. 2023թ. մայիսի 18-ին Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի գլխավորությամբ կազմակերպվել և անց է կացվել հանրային խորհրդակցություն: Հանդիպմանը հրավիրվել են ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարության և բնակչության, ինչպես նաև ՀՏԶՀ-ի և ԱԶԲ-ի ներկայացուցիչները: Խորհրդակցության նպատակը շահագրգիռ կողմերին և լայն հանրությանը ՇրջագիրնՆախագիծն իրականացնելու մտադրության, Շրջագրի Նախագծի հայեցակարգի մասին տեղեկացնելը, նրանց՝ հնարավորինս սեղմ ժամկետներում իրենց դիտողությունները և առաջարկությունները ներկայացնելու հնարավորություն ընձեռելը, ինչպես նաև բոլոր տրամաբանական առաջարկությունները մանրամասն նախագծման փուլում, բացասական ազդեցությունների նվազեցման միջոցառումներում, մշտադիտարկման պլանում հաշվի առնելն էր: Մասնակիցներին, մասնավորապես, տեղեկություններ են փոխանցվել ՇրջագրիՆախագծի, դրա իրականացման պլանի, հնարավոր սոցիալական և տարաբնակեցման ազդեցության, ԱՄՔ ՀԳՀ շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արյունքների, ԲՔՄ-ի կառուցվածքի, ընթացակարգերի և գործարկման վերաբերյալ: Քննարկման մասնակիցները Նախագծի թիմին խնդրել են դպրոցի նախագծում ներառել որոգման համակարգի ներդնումը դպրոցի տարածքում ծառերի խնամքը կազմակերպելու նպատակով, վերականգնել կիսավեր հրաձգարանը, ինչպես նաև քարե պարիսպ կառուցել՝ դպրոցն ու գերեզմանատունը սահմանազատելու նպատակով: Հնչեցված առաջարկությունների կարևորությունից ելնելով՝ առկա հարցերն ու խնդիրները լրացուցիչ քննարկելու և դրանք մանրամասն նախագծման փուլում հնարավորինս հաշվի առնելու համաձայնություն է ձեռք բերվել: Հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը, հանդիպման օրակարգը, մասնակիցների ցանկը, արձանագրությունը՝ հանդիպման մասնակիցների բարձրաձայնած խնդիրների և մտահոգությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների և որոշումների վերաբերյալ ամբողջական տեղեկություններով, պատշաճ կերպով փաստագրվել և կցվել են սույն հաշվետվությանը՝ «Հավելված 5. Հանրային հաղորդակցության և քննարկումների հաշվետվություն» տեսքով:

27. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ՀՏԶՀ-ը ՇՄԱԳ-ի և փորձաքննության նախապատրաստական փուլում տեղում հանրային ևս երկու քննարկում է կազմակերպելու:

28. Հաշվի առնելով, որ շինարարության ընթացքում հանրակրթական գործընթացը կազմակերպվելու է այլ համայնքում կամ պետական սեփականություն հանդիսացող այլ շենքում, և տեղափոխման ամբողջ գործընթացը կազմակերպելու նկատառումներից ելնելով՝ դպրոցի տնօրինությունը շինարարական աշխատանքների մեկնարկի վերաբերյալ տեղեկացվելու է նախօրոք՝ 2 ամիս առաջ: Շինարարական աշխատանքների մեկնարկի, իրականացման ժամանակացույցի, ճանապարհային երթևեկության կարգավորման պլանի, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմների մասին տեղեկությունները կապալառուի կողմից հանրայնացվելու են հանրային խորհրդակցությունների ընթացքում՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը: Դպրոցի տնօրինությանն են փոխանցվել աշխատանքների

ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների անհրաժեշտության դեպքում հետադարձ կապ հաստատելու տվյալներ։

### 4.2. Բողոքների քննման մեխանիզմներ

29. Ծրագրի ~~Նախագծի~~ մասին հետադարձ կարծիքներ ստանալու, ընթացքում ծագած մտահոգությունների, բողոքների անդրադարձման նպատակով Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ողջ ընթացքում՝ նախաշինարարական և մանրամասն նախագծման փուլերից մինչև ակտիվ շինարարության ու հետշինարարական շահագործման փուլ, գործելու է Բողոքների անդրադարձման մեխանիզմը (ԲԱՄ), որի հիմքում ընկած է ԱԶԲ-ի ղեկավար սկզբունքների ու քաղաքականության խնդիրների լուծման գործառույթը։ Նախագծում տեղայնացվելու է ՍԱԲԾ-ի համար մշակված ԲՔՄ-ը՝ ապահովելով հանրության հետ շարունակական հաղորդակցությունը և նրանց հնչեցրած բողոքներին ու առաջարկություններին գործուն արձագանքն ու դրանց պատեհաժամ լուծումը։ ԲՔՄ-ի շրջանակներում բողոքները և դժգոհությունները քննարկվելու են հետևյալ ընթացակարգով՝

*Քայլ 1.* ԱԵԱ-ը հանդես է գալիս առաջարկություններով, կապալառուի՝ հանրային քննարկման ընթացքում հաստատված մասնագետներին կամ տեղական համակարգողին է ներկայացնում Ծրագրից ~~Նախագծից~~ բխող գործողությունների հետ կապված իր մտահոգություններն ու դժգոհությունները, վերջիններս էլ տեղական մակարդակում լուծում են տալիս դրանց։ Թափանցիկության ու հաշվետվողականության նկատառումներով և ԱԵԱ-ի համար տեղեկատվության, աջակցության և բողոքների անդրադարձման ծառայությունների հասանելիությունը ապահովելու նպատակով՝ կապալառուն սահմանում է ԲՔՄ հետևյալ ընթացակարգը՝

(i) Ցուցանակներ, վահանակներ և պաստառներ, որոնք տվյալներ են պարունակում դաշտային գրասենյակի տեղի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, նրանց հետ կապ հաստատելու միջոցների, այդ թվում՝ հեռախոսահամարների, փոստային և էլեկտրոնային փոստի հասցեների և այլն մասին,

(ii) Դաշտային գրասենյակ,

(iii) Գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյան,

(iv) Բողոքների անդրադարձման պատասխանատու անձնակազմ,

(v) Հեռախոսագիրք և էլեկտրոնային հասցեներ, ներառյալ՝ ՀՏԶՀ-ի հետ կապ հաստատելու տվյալներ։

30. ԱԵԱ-ը կարող են տեղում դիմել կապալառուի ներկայացուցչին (շինարարական աշխատանքների ղեկավարին, ինժեներին, սոցիալական կամ շրջակա միջավայրի պահպանության հարցերով մասնագետին) կամ վերահսկող ինժեներին և (կամ) շինհրապարակի մոտ գործող դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում առաջարկություն ներկայացնել կամ բողոք գրանցել։ ԱԵԱ-ը կարող են նաև բողոքներով կամ առաջարկություններով դիմել համայնքային տեղական համակարգողին, վերջինս դրանք գրանցում է վարչակազմի շենքում պահվող բողոքների գրանցամատյանում։ Առաջարկությունների կամ բողոքների ներկայացման հայտի ձևանմուշը, դրա բովանդակությունն ու ձևաչափը ճշգրտվելու են ԲԿՊ-ում և (կամ) համաձայնեցվելու ՀՏԶՀ-ի հետ։ Վերահսկող ինժեներն ու կապալառուն նախնական փորձելու են լուծում տալ

ԱԵԱ-ի կողմից բարձրաձայնված խնդիրներին և հաշվետու են լինելու արձանագրված առաջընթացի համար: Եթե խնդիրը կապալառուի կամ համայնքի ղեկավարության իրավասությունից ու պատասխանատվության շրջանակից դուրս է, այն կուղղվի ՀՏՁՀ-ին: Մյուս կողմից ԱԵԱ-ը իրենք պետք է հնարավորություն ունենան առանց խոչընդոտի դիմել ՀՏՁՀ-ին:

31. *Քայլ 2.* Եթե ԱԵԱ-ը բավարարված չէ կապալառուի կողմից իր հնչեցրած բողոքների կարգավորմամբ, նրան անհրաժեշտ է լրացուցիչ հնարավորություն տալ, մասնավորապես, անմիջապես դիմելու ՀՏՁՀ-ին: Բոլոր բողոքները, ներառյալ՝ դրանց հետ կապված լուծումներն ու արդյունքները, պատշաճ կերպով փաստագրվելու և հասանելի են լինելու հետագա ուսումնասիրության, մշտադիտարկման և գնահատման համար: ՀՏՁՀ-ը պետք է կանոնավոր կերպով ստուգի բողոքների գրանցամատյանը և բողոքների անդրադարձման հարցում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև լուծում տա անմիջապես ՀՏՁՀ-ին ուղղված բողոքներին: Հիմնադրամը պետք է բողոքի գրանցումից հետո 5 օրվա ընթացքում արձագանքի դրան՝ բողոքատուին տեղեկացնելով ու ուղղորդելով հնարավոր լուծումների կամ անհրաժեշտ լրացուցիչ ընթացակարգերի մասին: ՀՏՁՀ-ի՝ ԲՔՄ-ի շրջանակներում կարգված համակարգողը կամ պատասխանատու աշխատակիցը, կախված բողոքի շրջանակից, այն փոխանցում է համապատասխան բաժին (Վերահսկման խումբ, Փորձաքննության և վերլուծության խումբ, Սոցիալական և բնապահպանական խումբ, Գնումների բաժին):

32. *Քայլ 3.* Եթե բողոքատուն բավարարված չէ ՀՏՁՀ-ի կողմից ներկայացված բողոքի լուծմամբ, նա կարող է դիմել ՏԿԵՆ-ին: Բողոքատուն ԲՔՄ-ի ցանկացած մակարդակում կարող է նաև դիմել համապատասխան դատարան:

### 4.3. Հանրային քննարկումների և հաղորդակցման պլան

33. Սույն ենթաբաժնի նպատակը ՀՏՁՀ-ի, կապալառուի և վերահսկող ինժեների կողմից ԱՁԲ 2009թ. ԱՄՔ պահանջներին համապատասխան և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ծրագրի ~~Նախագծի~~ վերաբերյալ տեղեկատվության հանրայնացման և շահագրգիռ կողմերի, ԱԵԱ-ի, ՀԿ-ների և այլ խմբերի հետ հետևողական համակարգված հաղորդակցություն ապահովելու նպատակով իրականացման ենթակա բոլոր միջոցառումների փաստագրումն է: Հանրային քննարկումների և հաղորդակցության պլանը (ՀՔՀՊ) կապող օղակ է հանդիսանում ՀՏՁՀ-ի, վերահսկող ինժեների ու կապալառուի (ենթակապալառուի) և ԱԵԱ-ի՝ տեղի բնակչության, ձեռնարկատիրությունների և հանրության այլ շերտերի միջև, այն առումով, որ թե նախաշինարարական և թե շինարարական աշխատանքների ակտիվ փուլում հնարավոր բացասական ազդեցությունների հետ կապված խորհրդատվության համար խողովակ է հանդիսանում: Այն ուղղված է շահագրգիռ բոլոր կողմերի կառուցողական ներգրավվածությունն ապահովելուն և հանրային իրազեկության մակարդակը բարձրացնելուն՝ Ծրագրի~~Նախագծի~~, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և զուգընթաց միջոցառումների ժամկետների, զբաղվածության ապահովման հնարավորությունների, Ծրագրի ~~Նախագծի~~ առավելությունների մասին տեղեկատվության պատեհաժամ տարածման միջոցով:

34. ՀՔՀՊ-ը բովանդակում է շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ տեղի բնակչության մտահոգությունները և շահերը բավարարելուն ուղղված ընդհանուր դրույթները, և կապալառուի կողմից բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ ներդնելու պահանջները:

35. Ըստ այդմ, ՀՔՀՊ-ը ներառում է՝

- Նախաշինարարական և շինարարության հետագա փուլերում կանոնավոր հանդիպումներ՝ նպատակաուղղված Ծրագրի ~~Նախագծի~~ մասին տեղեկատվության ապահովելուն և խորհրդատվության հնարավորություններ ստեղծելուն, ներառյալ՝ ԲՔՄ-ների և դրանց առնչվող ընթացակարգերի մասին հանրության իրազեկումը,
- Կապալառուի կողմից ներդրվելիք ԲՔՄ-ները,
- Տեղեկատվության հանրայնացումը:

36. Աշխատանքների մոբիլիզացման շրջանում, շինարարական միջամտության ենթակա հողատարածքին հասանելիություն և ՀՏՁՀ-ի կողմից շինարարական աշխատանքները մեկնարկելու թուլտվություն ստանալուց անմիջապես հետո, շինարարական աշխատանքների մեկնարկից առնվազն 10 օր առաջ կապալառուի կողմից հանրության հետ նախաշինարարական փուլի հանդիպում է կազմակերպվում ու անցկացվում:

37. Կապալառուն պարտավորվում է հանդիպման անցկացման ամսաթիվը, տեղը և նպատակն ազդարարող պաստառներ փակցնել հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրերում և դրանք տարածել ազդակիր բնակչության շրջանում: Հանդիպման անցկացման մասին ծանուցման մեջ պետք է նշված լինեն հետադարձ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալներ:

38. Նախաշինարարական փուլի հանրային քննարկումները Նախագիծը, շինարարական աշխատանքների պլանը, ՇՄԱՆՓ-ը, ԲԿՊ-ը, տեղի բնակչության համար նախատեսված շրջակա միջավայրի պահպանության և առողջապահության ու սոցապահովության ծրագիրը, ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես օրինակ՝ փոշու մակարդակի ցուցանիշների բարձրացումը, աղմուկային աղտոտումը, ճանապարհների ժամանակավոր արգելափակումը և երթևեկության խախտումները, ինչպես նաև բողոքարկման առկա մեխանիզմները ներկայացնելու և դրանց շուրջ քննարկում ծավալելու նպատակ են հետապնդում:

39. ԱԵԱ-ի բարձրաձայնած խնդիրներն ու դիտողությունները իր իրավասությունից դուրս լինելու (անկանխատեսելի հանգամանքների) դեպքում կապալառուն պարտավորվում է դրանք հասցեագրել վերահսկող ինժեներին: Կապալառուն պարտավորվում է կատարված աշխատանքների մասին առաջին ամսվա հաշվետվության մեջ անդրադառնալ վերոհիշյալ խնդիրների և դիտողությունների կարգավիճակին, այն է՝ լուծված են դրանք, թե ոչ: Կապալառուն պարտավորվում է նաև շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ բացասական ազդեցության հանդեպ զգայուն խմբերի, ԱԵԱ-ի, հանրության այլ շահագրգիռ շերտերի հետ շփումներում թափանցիկության ապահովման նկատառումներով հետադարձ կապի գործուն մեխանիզմ ներդնել: Կապալառուի կողմից պետք է արձանագրվեն խորհրդակցության մասնակիցների մասին մանրամասն տվյալները և դրա ընթացքում հնչած մեկնաբանությունները: Արձանագրությունը ներառվում է ԲԿՊ-ի մեջ:

40. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների՝ ՇՄԱԳ-ի նախապատրաստման և

բնապահպանական փորձաքննության շրջանակներում ՀՏԶՀ-ը լրացուցիչ երկու խորհրդակցություն է կազմակերպելու։ ԱՄՔ ՀԳՀ-ի վերջնական տարբերակը ԱԶԲ-ի կողմից այն հաստատելուց հետո հրապարակվելու է ՀՏԶՀ-ի պաշտոնական կայքէջում (Տե՛ս՝ http://www.atdf.am)։ Այն այնուհետև հասանելի է լինելու (էլեկտրոնային փոստով տարածելու միջոցով) շահագրգիր բոլոր կողմերին, այդ թվում՝ դպրոցի տնօրինությանը, բնակավայրի վարչական ղեկավարությանը, մարզային վարչակազմի ղեկավարությանը, Ծրագրի ~~Նախագծի~~ համակարգող և վերահսկող մարմնին։

## 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

41. ՀՏԶՀ-ը պատասխանատու է հարկադիր տարաբնակեցման անվտանգության երաշխիքների ներքին մշտադիտարկման համար և պարտավորվում է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ընթացքում ԱԶԲ-ի քննությանը և հաստատմանը ներկայացվող՝ Ծրագրի ~~Նախագծի~~ ներքին մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություններում որպես հատուկ չափորոշիչ հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ առանձին գլուխ ներառել։
Մշտադիտարկման ու հաշվետվողականության շնորհիվ հնարավոր կլինի վերհանել և վերացնել տարաբնակեցման հնարավոր չնախատեսված հետևանքները, ԱԶԲ 2009թ. ԱՄՔ պահանջների համաձայն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակին կարգավորել հնարավոր բողոքները և ապահովել հարկադիր տարաբնակեցման անվտանգության երաշխիքների պահանջների համապատասխանությունը։ Կապալառուի թիմում ներգրավված բնապահպանության և սոցիալական ոլորտի մասնագետները և վերահսկող ինժեների թիմը վերահսկելու են ծրագրի իրականացման համապատասխանության ընթացքը և դրա մասին ՀՏԶՀ-ին ամենամսյա հաշվետվություն են ներկայացնելու։
42. ԱՄՔ ՀԳՀ-ի Մշտադիտարկման և գնահատման ուղղվածության հիմնական նպատակներն են՝

- Վերլուծել ԱՄՔ ՀԳՀ-ի մշտադիտարկման ցուցանիշները, ժամկետները, ընթացակարգերը և հաշվետվության ձևանմուշները,
- Պատրաստել առաջարկներ՝ հիմք ընդունելով ԱԶԲ-ի տարաբնակեցման քաղաքականությունը,
- Ժամկետները կամ պայմանները լրացուցիչ ճշտելու համապատասխան առաջարկություններ պատրաստել,
- Հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել։

## 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

43. Վերակառուցման և (կամ) տեխնիկական վերազինման աշխատանքները կատարվելու են գործող դպրոցի տարածքում, որը պետական սեփականություն հանդիսացող տարածք է։ Շինարարական միջամտության ենթակա հողատարածքը թե պաշտոնապես և թե ոչ

պաշտոնական ձևաչափով չի շահագործվում որևէ այլ սուբյեկտի կողմից և հողատարածքում ՀՕՏ ազդեցությունները բացակայում են: Դպրոցի սահմաններից 50 մետր հեռավորության վրա ձեռնարկատիրական գործունեության գրանցված դեպքեր չկան: Ներդրվել է ԲՔՄ, և բողոքները, եթե այդպիսիք լինեն, կարգավորվելու են այդ մեխանիզմի շրջանակում:

44. ՕՐԱԳԻՐԸ~~ՆԱԽԱԳԻԾԸ~~ ոչ կամավոր տարաբնակեցման և բնիկ ժողովուրդների վրա ազդեցություն չի ունենալու, քանի որ, ինչպես արդեն նշվել է, դպրոցի վերակառուցման և (կամ) տեխնիկական վերազինման նախագծի շրջանակներում շինարարական միջամտության ենթակա տարածքը դպրոցի գործող տարածքն է: Բացի դրանից, ՀՀ-ը իր էթնիկ կազմով միատարր է:

45. ՍԱԲԾ-ը բնապահպանական ռիսկայնության տեսանկյունից դասվում է B, հարկադիր տարաբնակեցման տեսանկյունից՝ C, բնիկ ժողովուրդների վրա ազդեցության տեսանկյունից՝ C կատեգորիաների շարքին: Անվտանգության մեխանիզմների նույն դասակարգումը պահպանվելու է նաև դրամաշնորհային այս Ծրագրի ~~նախագծի~~ համար: Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի համար պահանջվում է ՇՄԱԳ և փորձաքննություն:

46. Շինարարության ակտիվ փուլում սոցիալական և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության զգալի մասը ակնկալվում է կոնկրետ հատվածում, սահմանափակվում է շինարարական աշխատանքների շրջանակներով և հեշտությամբ հնարավոր է մեղմացնել ինժեներատեխնիկական և տնտեսվարման համապատասխան միջոցառումների հաշվին: Նման որոշակի միջոցառումներ ներկայացված են ԲԿՊ-ում:

47. Նախագծի շրջանակներում դպրոցի շենքի վերակառուցումը և արդիականացումը անպատճառ նաև զգալի դրական ազդեցություն է ունենալու սոցիալ-տնտեսական գործունեության և միջավայրի համար: Առնվազն 335 դպրոցականներ ուսուցում են ստանալու սեյսմիկ անվտանգության չափանիշներին համապատասխանող դպրոցական մասնաշենքերում:

## Հավելված 1. Ոսկեհատի միջնակարգ դպրոցի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիրը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 8 հոկտեմբերի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական ժամյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲԵԿՏ(ՆԵՐ)**

«ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Արմավիր, համայնք Ոսկեհատ Մ. Մաշտոցի փողոց 1/4 դպրոց

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

30.09.2020թ 6981 Անհատույց օգտագործման պայմանագիր

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 04-081-0030-0039

Մակերեսի չափը (հա)՝ 3.1169

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 08102020-04-0051, գաղտնաբառ՝ WDBAALYDAFY5**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*



**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 04-081-0030-0039-001 | Դպրոց | 2352.4 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 2 | 04-081-0030-0039-002 | Պահեստ | 56.1 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 3 | 04-081-0030-0039-003 | Կաթսայատուն | 70 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 4 | 04-081-0030-0039-004 | Զուգարան | 12.7 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 5 | 04-081-0030-0039-005 | Հրաձգարան | 53.6 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |
| 6 | 04-081-0030-0039-006 | Ջրավազան | 286.5 քմ | ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ |

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Պայմանագիրը գործում է անժամկետ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արմենուհի Հարությունյան

Գրանցված պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 08102020-04-0051, գաղտնաբառ՝ WDBAALYDAFY5**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻՐ

(մասշտաբով)

1:2000

Կատարող

(ստորագրություն)



ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԾԻՐ

(մասշտաբով)

1:500

Կատարող

(ստորագրություն)

## Հավելված 2. Տեղանքի լուսանկարները

### Մուտք դպրոցի տարածք

### Առջևի բակ

## Աջակողմյան հատված

## Տարածքի հետնամաս

Տարածքի ձախակողմյան հատված

Անաշխատ զուգարան

Կաթսայատուն

Տարածքի հետնամասի հարակից ճանապարհը

Ցանկապատից 5մ հեռավորության վրա գտնվող տներ

Աջակողմյան հատվածում դպրոցի տարածքի հարակից հողակտոր

Հավելված 3. Տեղանքի կադաստրային քարտեզը



Հավելված 4. Google Maps հավելվածի միջոցով արված լուսանկարներ

**Հավելված 5. Հանրային հաղորդակցության և քննարկումների վերաբերյալ հաշվետվություն**

**1.1.1. Ճանաչողական հանդիպում Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության հետ**

1. 2023թ. մայիսի 12-ին ճանաչողական հանդիպում է տեղի ունեցել Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության հետ: Հանդիպումը Նախագծի մասին համայնքին իրազեկելու, դրա սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և առաջարկվող մեղմացման միջոցառումները հակիրճ ներկայացնելու նպատակ է հետապնդել: Հանդիպումը տեղի է ունեցել Ոսկեհատի վարչակազմի շենքում, Ոսկեհատի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար տկն Սոֆիկ Պետրոսյանի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզովի և ՀՏԶՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ տկն Քնարիկ Գրիգորյանի մասնակցությամբ:

2. Հանդիպումը հնարավորություն է տվել մանրամասն տեղեկություններ ստանալ Նախագծի, ՇՄԱՆՓ-ի ընթացքի, հնարավոր բացասական ազդեցությունների մեղացման միջոցառումների մասին: Ազդակիր բնակավայրի ղեկավարությունը տեղեկացել է Ծրագրի ~~Նախագծի~~ նախաձեռնողների՝ ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1325 որոշմամբ սահմանված կարգով և ԱՋԲ-ի անվտանգության մեխանիզմների քաղաքականության հանրային քննարկումների և ծանուցման պահանջներին համապատասխան հանրային քննարկումներ կազմակերպելու հանձնառության մասին:

3. Ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարությունից ծրագրված հանրային քննարկումներում հանրության բովանդակային ու արդյունավետ մասնակցություն ապահովելու հարցում աջակցություն ցուցաբերելու ակնկալիք է հայտնվել:

4. Նշվել է, որ նախքան հանրային լսումների անցկացումը ՀՏՋՀ-ը ապահովել է թեմայի շուրջ արդիական և անհրաժեշտ տեղեկությունների հասանելիությունը, դրանց ներառականությունը ԱԵԱ-ների, հատկապես՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի խմբերի համար:

5. Բնակավայրի վարչական ղեկավարության ներկայացուցիչներն իրենց հերթին պարտավորվել են աջակցել Ծրագրի ~~Նախագծի~~ վերաբերյալ տեղեկությունների հանրայնացմանը և տարածմանը, այդ թվում՝ իրենց պաշտոնական կայքէջերում համապատասխան հայտարարություններ ներբեռնելով, ինչպես նաև դրանք հրապարակելով հանրային տեսանելի հարթակներում:

6. Ազդակիր բնակավայրի ղեկավարությանը տրամադրվել է հետևել բովանդակությամբ հայտարարության տեքստը (ստորև՝ դրա ոչ պաշտոնական թարգմանությունը)՝ այն հրապարակայնացնելու և ազդակիր բնակչության ու շահագրգիռ շրջանակներում տարածելու նպատակով՝

*«2023թ. մայիսի 18-ին ժամը 15:00-ին հրավիրում ենք ձեզ մասնակցելու «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015 – 2035թթ. ծրագրի» շրջանակում Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման* Ծրագրի ~~*նախագծի*~~ *վերաբերյալ հանրային քննարկմանը, որը տեղի է ունենալու Ոսկեհատի մշակույթի տանը: Քննարկման ընթացքում ներկայացվելու են շինարարական աշխատանքների սոցիալական և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններն ու դրանց մեղմացման մեխանիզմները: Մասնակիցները հնարավորություն են ունենալու հարցեր ուղղել, բարձրաձայնել իրենց մտահոգությունները»:*

7. Հայտարարությունը հրապարակվել է Վաղարշապատ համայնքի պաշտոնական կայքէջում (տե՛ս՝ Նկար 1) և սոցիալական մեդիա հարթակներից մեկում համայնքի պաշտոնական էջում (տե՛ս՝ Նկար 2): Հայտարարության տեքստը փակցվել է նաև հանրային

նշանակության շենքերի, մասնավորապես՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի, Մշակույթի տան, Ոսկեհատի վարչական շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրերում (տե՛ս՝ Նկար 3, Նկար 4)։

## 1.1.2. Հանրային քննարկում Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում

8. Հանրային քննարկումը տեղի է ունեցել 2023թ. մայիսի 18-ին և կազմակերպվել է ԱԶԲ ԱՄՔ հանրային քննարկումների և ծանուցման պահանջներին համապատասխան, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1325 որոշմամբ սահմանված կարգով։

9. Հանդիպումը հյուրընկալվել է Ոսկեհատի վարչակազմի կողմից՝ վարչակազմի ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանի գլխավորությամբ։ Հանդիպման մանրամասն արձանագրությունը, ներառյալ՝ մասնակիցների ցանկը, հանգամանորեն փաստագրում է մասնակիցների կողմից բարձրացված հարցերն ու մտահոգությունները։




Նկար 1. Հանրային լսումների մասին ծանուցումը, որը հրապարակվել է Վաղարշապատ համայնքի պաշտոնական կայքէջում

Նկար 2. Հանրային լսումների մասին ծանուցումը, որը հրապարակվել է Facebook սոցիալական մեդիա հարթակում Վաղարշապատ համայնքի պաշտոնական էջում:

Նկար 3. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:



Նկար 4. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:

Նկար 5. Հանրային լսումների մասին ծանուցումը՝ փակցված հանրային նշանակության շենքի՝ հայտարարությունների համար առանձնացված տեսանելի վայրում:

**1.1.3. Հանրային քննարկումների արձանագրություն առ 18 մայիսի, 2023թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ~~ՆԱԽԱԳԾԻ~~ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՕՐԱԿԱՐԳՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

**Ամսաթիվը և ժամը՝** 18 մայիսի, 2023թ., 15:00 – 17:00
**Վայրը՝** Մշակույթի տան հանդիսությունների սրահ
**Հասցեն՝** Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր

**Մասնակիցներ՝**
Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյան,
Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար տկն Սոֆիկ Պետրոսյան,
Շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ-ի ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզով,
ՀՏԶՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ տկն Քնարիկ Գրիգորյան,
Վաղարշապատ համայնքի, Ոսկեհատ բնակավայրի վարչական ղեկավարության, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի տնօրինության ներկայացուցիչներ, ուսուցչական կազմ, Ոսկեհատ բնակավայրի բնակիչներ (ընդհանուր թիվը՝ 78, տե՛ս՝ Հավելված 1-ում ներկայացված ցանկը)։

**Հանդիպման օրակարգը՝** Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման Ծրագրի ~~նախագծի~~ բնապահպանական և սոցիալական ազդեցության ընդհանուր ներկայացում։

Բացման խոսքով հանդես է եկել Ոսկեհատի վարչական ղեկավար պրն. Արմեն Խուդաբաշյանը։ Նա նշել է, որ խորհրդակցության նպատակը ՀՏԶՀ-ի կողմից իրականացվելիք Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման Ծրագրի ~~նախագծի~~ քննարկումը և դրա իրականացմամբ պայմանավորված՝ շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունների քննարկումն է։ Մատնանշելով, որ խորհրդակցությունը կազմակերպվել է ԱԶԲ-ի կողմից՝ պրն. Խուդաբաշյանը խոսքը փոխանցել է շրջակա միջավայրի պահպանության հարցերով ԱԶԲ-ի ազգային խորհրդատու պրն. Տիգրան Օգանեզովին։
Տիգրան Օգանեզովը ողջունել է հանդիպման մասնակիցներին և նրանց տեղեկացրել, որ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման ծրագիրը~~նախագիծը~~ ֆինանսավորվելու է «Բարգավաճ և կայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» կողմից, իրականացվելու է ՀՏԶՀ-ի կողմից և ամբողջացնելու է ԱԶԲ-ի ՍԱԲԾ-ը։ Նա հակիրճ ներկայացրել է հանդիպման օրակարգում ներառված հարցերը՝ նշելով, որ նախագծի իրականացմամբ պայմանավորված շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունները ներկայացնելուց հետո հանդիպումը շարունակվելու է

հարցուպատասխանի ձևաչափով, որի նպատակը ՇՄԱՆՓ-ին առնչվող բոլոր հարցերի քննարկումն ու կարգավորումն է: Տիգրան Օգանեզովը հանդիպման մասնակիցներին տեղեկացրել է նաև դպրոցի վերակառուցման շրջանակներում նախատեսվող նախագծման և շինարարության նորարարական լուծումների, դրանց սեյսմիկ անվտանգության, հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառականության ապահովման ուղղվածության, 21-րդ դարի հանրակրթության չափորոշիչներին համապատասխանության, ինչպես նաև արտադպրոցական միջոցառումների և այդ նպատակով համայնքային նշանակության ենթակառուցվածքների տրամադրման մասին: Նա ներկաներին վստահեցրել է, որ բացասական ազդեցության զգալի մասը բաժին է ընկնում շինարարության ակտիվ փուլին, վերաբերելու է հստակ նախանշված տարածքին, սահմանափակվելու է երթևեկության կազմակերպման որոշակի շեղումներով, նշել, որ ԲԿՊ-ում ներառվել են այդ ազդեցությունները մեղմացնելու արդյունավետ մեխանիզմներ:

Տիգրան Օգանեզովը ներկայացրել է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակը՝ կրկին ընդգծելով դրա՝ շինարարության ակտիվ բաժին ընկնելու հանգամանքը, ինչպես նաև տեղային և ժամանակավոր բնույթը: Այս համատեքստում նա մատնանշել է մթնոլորտային օդի որակին առնչվող հնարավոր ազդեցությունը՝ պայմանավորված հողային աշխատանքների հետևանքով առաջացող փոշու, ինչպես նաև շահագործվող մեքենաներից ու սարքավորումներից արտանետվող գազերի բարձր մակարդակով: Նա նշել է, որ ԲԿՊ-ը որոշակի միջոցառումներ է նախատեսում նշված ազդեցությունները մեղմացնելու նպատակով, այդ թվում՝ շինարարության գոտում շինհրապարակի կանոնավոր ջրցողումների տեսքով: Շինարարության ընթացքում փոխադրամիջոցների և տեխնիկայի շահագործումը առաջացնում է աղմուկ ու վիբրացիա, ինչպես նաև աղտոտիչների արտանետումներ: Տիգրան Օգանեզովը ներկաներին հավաստիացրել է, որ ազդեցության շրջանակը սահմանափակվելու է միջնակարգ դպրոցի տարածքով՝ բացառելով լրացուցիչ հողատարածքների վրա ազեցության ընդլայնումը: Նա կարևորել է Ծրագրի ~~Նախագծի~~ իրականացման համար առանձնացված տարածքում հողի վերին շերտի հնարավորինս պահպանումը՝ հետագայում դրա կանաչապատման նպատակով, ինչպես նաև ընդգծել է վառելիքի, յուղի արտահոսքից և այլ հեղուկ նյութերից ու թափոններից հողի թունավորումը կանխարգելող միջոցառումների կարևոր նշանակությունը: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության համատեքստում քննարկվել է նաև աղբի գոյացումն ու կուտակումը, ինչը պատշաճ չկառավարելու դեպքում առաջացնում է աղտոտվածություն, թունավորում, շրջակայքի էսթետիկայի կորուստ: Տիգրան Օգանեզովը մանրամասն ներկայացրել է շինարարական թափոնների տեսակները, թափոնների կառավարման և ազդեցության մեղմացման առաջարկվող մոտեցումները:

Նախագծում առաջնահերթ նշանակություն է տրվում սոցիալական համակարգերի վրա ազդեցությանը, այդ թվում՝ Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման նախագծի շրջանակներում շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած ցանկացած շեղում, խախտում կամ անհարմարություն՝ հատկապես հաշվի առնելով հարցի զգայունությունը: ~~Նախագիծը~~ Ծրագիրը անմիջական ազդեցություն է ունենալու դպրոցի անձնակազմի, ուսուցչական կազմի, աշակերտների, ինչպես նաև Ոսկեհատ բնակավայրի բնակիչների վրա: Բացի դրանից, բնակելի մի խումբ տների, գյուղատնտեսական

նշանակության հողատարածքների և գերեզմանատան՝ դպրոցի մոտ տեղակայվածությունը ենթադրում է տեղի բնակչության կենսագործունեության վրա շինարարական աշխատանքներով պայմանավորված ժամանակավոր անուղղակի բացասական ազդեցություն: Տիգրան Օգանեզովը թվարկել է ԲԿՊ-ի շրջանակներում նշված խնդիրները կարգավորելուն ուղղված համապարփակ միջոցառումները՝ ուղղված տեղի բնակչության վրա շինարարական աշխատանքներով պայմանավորված ցանկացած բացասական ազդեցությունից խուսափելուն, այն կանխարգելուն և մեղմացմանը: Հավատարիմ մնալով նշված սկզբունքներին՝ Ծրագիրը~~Նախագիծը~~ նպատակ է հետապնդում դպրոցի վերակառուցման ողջ ընթացքում նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքներով պայմանավորված բացասական սոցիալական ազդեցությունը և երաշխավորել ազդակիր բնակչության բարեկեցությունը:

Ոսկեհատի միջնակարգ դպրոցի վերակառուցման ընթացքում շինարարական աշխատանքների ակտիվ փուլում ակնկալվում է նաև դպրոցի տարածքին հարակից ճանապարհներին երթևեկության ինտենսիվության աճ՝ պայմանավորված բեռնատար ավտոմեքենաների և տեխնիկայի շարժով, շինհրապարակ և դրանից դուրս շինանյութի փոխադրումներով: Միևնույն ժամանակ, գործող ճանապարհների երկարաժամկետ արգելափակում կամ հետիոտնային արահետների, մայթերի արգելափակում չի նախատեսվում: Այնուամենայնիվ, հանրության և հետիոտների անվտանգության համար առկա են որոշակի վտանգներ, տեղերում հնարավոր է երթևեկության խաթարում, մասնավորապես՝ բնակելի շենքերի ու ձեռնարկատիրությունների տարածք մուտքի արգելափակում կամ խոչընդոտում: Տիգրան Օգանեզովը բնակիչներին տեղեկացրել է, որ վերոշարադրյալ ազդեցություններից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով շինարարության ընթացքում ազդեցությունների մեղմացման միջոցառումների առանցքում հասարակական կարգի ու անվտանգության ապահովումը, խցանումների և երթևեկության այլ շեղումների մեղմացումն է լինելու:

Հանդիպման երկրորդ մասում ՀՏՁՀ-ի սոցիալական հարցերով մասնագետ Քնարիկ Գրիգորյանը ներկայացրել է սոցիալական և տարաբնակեցման ազդեցության գնահատման նպատակը և մեթեդոլոգիան, ՀԳՀ-ի շրջանակներում անցկացված հետազոտության արդյունքները, Ծրագրի ~~Նախագծի~~ ԲՔՄ-ի կառուցվածքը, ինչպես նաև բողոքարկման հայտ ներկայացնելու ընթացակարգը:

Հանդիպումն այնուհետև ընթացել է հարցուպատասխանի ձևաչափով, մասնակիցները հնարավորություն են ունեցել արտահայտել իրենց կարծիքը, ներկայացնել իրենց անհանգստացնող հարցերը, հանդես են եկել առաջարկություններով:

Ներկաների կողմից, մասնավորապես, անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին՝

- ✓ Ռազմագիտության ուսուցիչը մտահոգություն է հայտնել շենքի վատթար վիճակի հետ կապված և հարց է առաջադրել կրող կոնստրուկցիաների նախագծային ամրացման նպատակահարմարության վերաբերյալ:

Տիգրան Օգանեզովը իրավացի է համարել սույն մտահոգությունը և վստահեցրել է, որ շենքի սեյսմակայունության փորձաքննություն է իրականացվելու, և բարձրաձայնված խնդրի վերաբերյալ որոշումը կայացվելու է՝ հաշվի առնելով այդ փորձաքննության արդյունքները:

- ✓ Ոսկեհատի վարչական ղեկավարը հետաքրքրվել է, թե հնարավոր է արդյոք դպրոցի նախագծում ներառել նաև ոռոգման համակարգի ներդնումը՝ նշելով, որ նման հետաքրքրությունը պայմանավորված է հողատարածքում աճող ծառերի ոռոգման կազմակերպման հարցում դպրոցի առջև ծառացած ընթացիկ խնդիրներով: Նշվել է նաև, որ դպրոցի տարածքում առկա է խոր ջրհոր, որը, սակայն, ներկայումս չի գործում:

Արձագանքելով հարցին՝ Տիգրան Օգանեզովը նշել է, որ ոռոգման համակարգի նախագիծը հիմնված է լինելու համայնքի և Ծրագրի ~~Նախագծի~~ն մասնակից այլ պատասխանատու մարմինների կողմից նախանշված տեխնիկական պահանջների վրա:

- ✓ Հանդիպման մասնակիցները դիմել են կիսաքանդ հրաձգարանը վերականգնելու խնդրանքով:

Տիգրան Օգանեզովը հավաստիացրել է, որ նրանց խնդրանքը պատշաճ կերպով դիտարկվելու է նախագծման փուլում:

Հանդիպման մասնակիցները նաև դիմել են դպրոցի ու գերեզմանատան տարածքների սահմանազատման համար քարե պարիսպ կառուցելու խնդրանքով: Բացի դրանից, նրանք առաջարկել են դպրոցի նոր մասնաշենքը տեղակայել հողատարածքի հակառակ կողմում՝ գերեզմանատան տարածքից հեռու: Ի կարևորումն վերոնշյալ առաջարկությունների՝ համաձայնություն է ձեռք բերվել լրացուցիչ քննարկելու նշված հարցերը՝ դրանք մանրամասն նախագծման փուլում ընդգրկելու հեռանկարով: Վերոնշյալ հարցերի և առաջարկությունների դիտարկման հետ մեկտեղ հանդիպումը նպաստել է համագործակցային մթնոլորտի ստեղծմանը, որի պայմաններում հնչեցված մտահոգությունները հաշվի են առնվել, իսկ հանդիպման մասնակիցները վստահություն են ձեռք բերել առ այն, որ իրենց կարծիքն ու գաղափարները նկատի են առնվելու որոշումների կայացման գործընթացում: Նախագծի թիմը ընդգծել է շահագրգիռ կողմերի բարձրաձայնած խնդիրներն արդյունավետորեն լուծելու նպատակով անհրաժեշտ գնահատում կատարելու և տեխնիկական պահանջները քննելու իրենց հանձնառությունը:

Գիտակցելով առաջարկությունների կարևորությունը՝ Նախագծի թիմն ընդունել է քննարկումներում ինժեներանախագծման թիմին ներգրավելու անհրաժեշտությունը: Վերջիններիս փորձն ու գաղափարներն անգնահատելի են հնչեցված առաջարկությունների՝ Ծրագրի ~~Նախագծի~~ ընդհանուր կոնցեպցիայում ներամփոփման նպատակահարմարության և իրագործելիության տեսանկյունից:

**Մասնակիցների ցանկը**



Մասնակիցների ցանկ / List of Participants

Ռազմաճակատի վիճակորոշ գոտիների վերակառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային լսումներ/
Public hearing on the reconstruction works of Voskichar secondary school

18.05.2023 Ռազմաճակատ Voskichar

| | Անուն/Name | Պաշտոն/Position | Հեռախոսահամար/ Contact Information | Ստորագրություն/ Signature |
|---|---|---|---|---|
| 1. | [illegible] | [illegible] | 093 195933 | [illegible] |
| 2. | [illegible] | Տեղ | 094-02-07-83 | [illegible] |
| 3. | [illegible] | Տեղ | 093-7500-99 | [illegible] |
| 4. | [illegible] | Տեղ | 077-639-553 | [illegible] |
| 5. | [illegible] | Տեղ | 098 51 10 48 | [illegible] |
| 6. | [illegible] | Տեղ | 093 78 00 95 | [illegible] |
| 7. | [illegible] | Տեղ | 094-79-99-77 | [illegible] |
| 8. | [illegible] | Տեղ | 095-57 23 54 | [illegible] |
| 9. | [illegible] | Տնտեսվար | 098-30 00 55 | [illegible] |
| 10. | [illegible] | Տնտեսվարող | 077-66-80-34 | [illegible] |
| 11. | [illegible] | [illegible] | 093-44-97-31 | [illegible] |
| 12. | [illegible] | [illegible] | 098 42 96 24 | [illegible] |
| 13. | [illegible] | Տեղ | 098 01 17 18 | [illegible] |
| 14. | [illegible] | Տեղ | 094-53-42-98 | [illegible] |
| 15. | [illegible] | Տեղ | 093-31-12-53 | [illegible] |
| 16. | [illegible] | Տեղ | 077-69-69-39 | [illegible] |
| 17. | [illegible] | Տեղ | 077-37-21-95 | [illegible] |
| 18. | [illegible] | Տեղ, [illegible] | 093-32-07-33 | [illegible] |
| 19. | [illegible] | [illegible] | 094-23-20-49 | [illegible] |
| 20. | [illegible] | [illegible] | 094-23-20-11 | [illegible] |
| 21. | [illegible] | [illegible] | 077-23-00-56 | [illegible] |
| 22. | [illegible] | [illegible] | 093-18-59-40 | [illegible] |
| 23. | [illegible] | գյուղապետ | 095-21-10-08 | [illegible] |
| 24. | [illegible] | գյուղապետ | 094-70-25-71 | [illegible] |
| 25. | [illegible] | գյուղապետ | 094 70 44 45 | [illegible] |
| 26. | [illegible] | [illegible] | 077 190149 | [illegible] |
| 27. | [illegible] | վարչ | 094 87 51 30 | [illegible] |
| 28. | [illegible] | [illegible] | 098 04 74 16 | [illegible] |
| 29. | [illegible] | Տեղ | 055 26 09 34 | [illegible] |
| 31 | [illegible] | [illegible] | 093 179000 | [illegible] |
| 32 | [illegible] | | 093 67 22 33 | [illegible] |
| 33 | [illegible] | | 093 87 97 10 | [illegible] |
| 34 | [illegible] | | 077 30 35 30 | [illegible] |
| 35 | [illegible] | | 093 83 94 60 | [illegible] |
| 36 | [illegible] | Տեղ | 093 32 25 71 | [illegible] |
| 37 | [illegible] | [illegible] | 094 74 66 85 | [illegible] |
| 38 | [illegible] | [illegible] | 094 78 45 80 | [illegible] |
| 39 | [illegible] | [illegible] | 098-95-73-72 | [illegible] |
| 40 | [illegible] | [illegible] | 093-52-60-43 | [illegible] |
| 41 | [illegible] | [illegible] | 077-43-74-33 | [illegible] |
| 42 | [illegible] | [illegible] | 041-660-661 | [illegible] |
| 43 | [illegible] | [illegible] | 077-11-96-76 | [illegible] |
| 44 | [illegible] | [illegible] | 055 55-90-83 | [illegible] |
| 45 | [illegible] | [illegible] | 094 02-22-30 | [illegible] |
| 46 | [illegible] | [illegible] | 098-96-98-38 | [illegible] |
| 47 | [illegible] | [illegible] | 098-04-99-28 | [illegible] |
| 48 | [illegible] | [illegible] | 098-22-66-58 | [illegible] |
| 49 | [illegible] | [illegible] | 094 40-22-25 | [illegible] |
| 50 | [illegible] | [illegible] | 094 45-12-49 | [illegible] |
| 51 | [illegible] | [illegible] | 098-32-22-80 | [illegible] |
| 52 | [illegible] | [illegible] | 077 86 05 14 | [illegible] |
| 53 | [illegible] | [illegible] | 093 930057 | [illegible] |
| 54 | | | | |
| 55 | | | | |
| 56 | | | | |
| 57 | | | | |



| | | | | |
|---|---|---|---|---|
| 58 | [illegible] | [illegible] | 055 87-39-07 | [illegible] |
| 59 | [illegible] | [illegible] | 094-202-966 | [illegible] |
| 60 | [illegible] | [illegible] | 093-67 93 05 | [illegible] |
| 61 | [illegible] | [illegible] | 093-31-22-56 | [illegible] |
| 62 | [illegible] | [illegible] | 093-32-73-78 | [illegible] |
| 63 | [illegible] | [illegible] | 098-404-493 | [illegible] |
| 64 | [illegible] | [illegible] | 098-23-60-54 | [illegible] |
| 65 | [illegible] | [illegible] | 093-91-16-68 | [illegible] |
| 66 | [illegible] | [illegible] | 094-77-66-50 | [illegible] |
| 67 | [illegible] | [illegible] | 077-85-03-70 | [illegible] |
| 68 | [illegible] | [illegible] | 098-21-07-15 | [illegible] |
| 69 | [illegible] | [illegible] | 093-27-82-82 | [illegible] |
| 70 | [illegible] | [illegible] | 093-41 80-62 | [illegible] |
| 71 | [illegible] | [illegible] | 077-07 75-37 | [illegible] |
| 72 | [illegible] | [illegible] | 093 06 02 65 | [illegible] |
| 73 | [illegible] | [illegible] | 094-86-83-31 | [illegible] |
| 74 | [illegible] | [illegible] | 093-456-334 | [illegible] |
| 75 | [illegible] | [illegible] | 098-67-67-18 | [illegible] |
| 76 | [illegible] | [illegible] | 094 94 42 56 | [illegible] |
| 77 | [illegible] | [illegible] | 094 30 30 82 | [illegible] |
| 78 | [illegible] | [illegible] | 094-21-32-15 | [illegible] |
| 79 | [illegible] | [illegible] | 093-33-46-48 | [illegible] |
| 80 | [illegible] | [illegible] | 094-42-49-67 | [illegible] |
| 81 | [illegible] | [illegible] | 094 72 32 71 | [illegible] |
| 82 | [illegible] | [illegible] | 093-91-69-66 | [illegible] |
| 83 | [illegible] | [illegible] | 077-91-75-74 | [illegible] |
| 84 | [illegible] | [illegible] | 098-39-61-52 | [illegible] |
| 85 | | | | |
| 86 | | | | |

**Լուսանկարներ հանրային քննարկումից**